

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ
ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Պատկերվող օբյեկտների տեղադրումը թղթի կամ կտավի մակերեսին դա՝

- 1) հարթ մակերեսի կազմակերպում է
- 2) միայն երկչափ մակերեսի կազմակերպում է
- 3) միայն եռաչափ մակերեսի կազմակերպում է
- 4) եռաչափ և երկչափ տարածության կազմակերպում է

2 Ընտրեք տեղադրման ճիշտ տարբերակները.



- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

3 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է ենթադրում էլեմենտների կրկնությամբ տեսողական հաջորդականություն ստեղծելը.

- 1) դոմինանտ
- 2) սիմետրիկ
- 3) ստատիկ
- 4) ռիթմիկ

4 Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է սիմետրիկ.



1.



2.



3.



4.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

5 Ի՞նչ է իրենից ներկայացնում «կոնտրաստը» կոմպոզիցիայում.

- 1) էլեմենտների տարբերությունն՝ ըստ ձևի, չափսի, երանգի և գույնի
- 2) գունային կրկնություններով ներդաշնակության ստեղծում
- 3) կոմպոզիցիոն տարրերի համաչափ բաշխում
- 4) որևէ էլեմենտի շուրջ կոմպոզիցիայի կենտրոնացում

6 Ո՞ր ձևակերպումն է բնութագրում «կոմպոզիցիա» եզրույթը.

- 1) լինդեումի վրա փորագրություն
- 2) հնուց հայտնի գեղանկարչության տեսակ
- 3) էլեմենտների տեսողական կազմակերպումը տարածության մեջ
- 4) գունաբաշխման սկզբունք

7 Ի՞նչ է «ոսկե հատումը» կոմպոզիցիայում.

- 1) հավասարակշռության կենտրոն
- 2) ստեղծագործության գունապնակ
- 3) կոմպոզիցիոն մակերեսի ձև
- 4) համաչափություն, որը համարվում է գեղագիտորեն կատարյալ և հարմոնիկ

8 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է բնութթով հակադարձ դինամիկ կոմպոզիցիային.

- 1) դոմինանտ
- 2) ստատիկ
- 3) ասիմետրիկ
- 4) ռիթմիկ

9

Նշվածներից ո՞րը չի համարվում գեղարվեստական տպագրության ձև.

- 1) վիմագրություն
- 2) լինոփորագրություն
- 3) օֆորտ
- 4) խճանկար

10

Կոմպոզիցիայում ի՞նչն է կոչվում «դոմինանտ».

- 1) էլեմենտ, որը գերակա է մնացածի նկատմամբ
- 2) կոմպոզիցիայի երկրաչափական կենտրոնը
- 3) առանցքը որի նկատմամբ դասավորված են էլեմենտները
- 4) շարժման բացակայությունը կոմպոզիցիայում

11

Միմյանց հակադարձ եզրույթների գույգերից, ո՞րն է սխալ.

- 1) դինամիկ և ստատիկ
- 2) ռիթմիկ և դինամիկ
- 3) սիմետրիկ և ասիմետրիկ
- 4) ախրոմատիկ և խրոմատիկ

12

Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է ստատիկ.



1.



2.



3.



4.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

13

Տրված գունային եռյակներից ընտրեք տաք գույների խումբը.

- 1) կապույտ, կանաչ, փիրուզագույն
- 2) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 3) կարմիր, նարնջագույն, դեղին
- 4) կարմիր, կապույտ, մանուշակագույն

14

Տրված գույներից ո՞րն է ասոցացվում երջանկության, լավատեսության ու ջերմության հետ.

- 1) դեղին
- 2) երկնագույն
- 3) մանուշակագույն
- 4) մոխրագույն

15

Ո՞ր գույներն են համարվում մոնոխրոմ.

- 1) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները
- 2) գունային շրջանի երեք միմյանց կից գույները
- 3) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները
- 4) գունային շրջանի միմյանցից հավասարահեռ երեք գույների խումբը

16

Ո՞ր գույնն է ստացվում կապույտի և դեղինի խառնուրդից.

- 1) նարնջագույն
- 2) կարմիր
- 3) երկնագույն
- 4) կանաչ

17

Ո՞ր գույներն են համարվում ախրոմատիկ.

- 1) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները
- 2) սպիտակից սև մոխրագույնի բոլոր երանգները
- 3) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները
- 4) կապույտի բոլոր երանգները

18 Նշել երկրորդային գույների եռյակը.

- 1) կարմիր, դեղին, նարնջագույն
- 2) կարմիր, դեղին, կապույտ
- 3) կանաչ, նարնջագույն, մանուշակագույն
- 4) կապույտ, կանաչ, մանուշակագույն

19 Տրված գունային եռյակներից ընտրեք սառը գույների խումբը.

- 1) երկնագույն, կապույտ, մանուշակագույն
- 2) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 3) կարմիր, նարնջագույն, դեղին
- 4) սև, մոխրագույն, սպիտակ

20 Ընտրեք նախադասության ճիշտ շարունակությունը «Կարմիրը, դեղինն ու նարնջագույնը...»

- 1) հիմնական գույներ են
- 2) տաք գույներ են
- 3) սառը գույներ են
- 4) ախրոմատիկ գույներ են

21 Ո՞ր ժամանակաշրջանով է թվագրվում քարանձավային նկարչության սկզբնավորումը Եվրոպայում.

- 1) մեզոլիթ
- 2) նեոլիթ
- 3) էնեոլիթ
- 4) պալեոլիթ

22 Ո՞րն է ճարտարապետական կառույց հին Եգիպտոսում.

- 1) օդեոն
- 2) զիկկուրատ
- 3) մաստաբա
- 4) բիթ-հիլանի

23

Մեգալիթյան կառույց է հանդիսանում՝

- 1) դիպիլոնը
- 2) մեգարոնը
- 3) ագորան
- 4) կրոմլեխը

24

Վիշապաքարի ո՞ր տեսակն է ներկայացված լուսանկարում.



- 1) վիշապակերպ
- 2) ձկնակերպ
- 3) ցլաձկնակերպ
- 4) ցլակերպ

25

Կերպարվեստի ի՞նչ տեսակ են իրենցից ներկայացնում Հայկական լեռնաշխարհի հայտնի ժայռապատկերները.

- 1) հաստոցային քանդակ
- 2) մանրաքանդակ
- 3) փորագրաքանդակ
- 4) բարձրաքանդակ


26

Ո՞ր տեղ է գտնվում որմնանկարներով հարուստ Ալտամիրայի քարանձավը.

- 1) Արգենտինա
- 2) Մեքսիկա
- 3) Իտալիա
- 4) Իսպանիա

27

Հին եգիպտական ո՞ր հայտնի հուշարձանն է պատկերված լուսանկարում.



- 1) Արքաների հովիտում դամբարանային համալիր
- 2) Ամենհոթեփ 3-րդ փարավոնի դամբարանային համալիրը
- 3) Ռամզես 2-րդ փարավոնի ժայռափոր տաճարը
- 4) Խաչեփսուօ կին-փարավոնի տաճարային համալիրը

28

Մ. թ. ա. 22-21-րդ դդ. թվագրվող արծաթե դրվագագարդ գավաթը հայտնաբերվել է՝



- 1) Շենգավիթում
- 2) Լոռի-բերդում
- 3) Քարաշամբում
- 4) Պատավաքարում

29

Վանի թագավորության գերագույն Խալդի աստվածության գլխավոր տաճարը գտնվել է՝

- 1) Արգիշթիխինիլիում
- 2) Էրեբունիում
- 3) Թեյշեբահինիում
- 4) Մուծածիրում


30

Բաբելոնից հայտնի հուշարձան է.

- 1) Դիպիլոնյան դարպասները
- 2) Մարդուկ աստծոն նվիրված դարպասները
- 3) Իշթարի դարպասները
- 4) Առյուծների դարպասները

31

Հնագիտական տվյալների համաձայն ո՞ւմ է պատկերում բրոնզե արձանիկը.



- 1) Շիվինի աստվածությանը
- 2) Խալդի աստվածությանը
- 3) Թեյշեբա աստվածությանը
- 4) Ուա աստվածությանը

32

Հին Հունաստանի <<Դիսկոբոլ>> (սկավառականետորդ) քանդակի հեղինակն է՝

- 1) Պրաքսիտելեսը
- 2) Պոլիկլետեսը
- 3) Միրոնը
- 4) Ֆիդիասը

33

Աքեմենյան ժամանակաշրջանին վերագրվող հեծյալի կերպարով արձայա եղջրագավաթ (պտյակ) Հայաստանում հայտնաբերվել է՝

- 1) Լճաշենում
- 2) Էրեբունիում
- 3) Վանաձորում
- 4) Շենգավիթում

34

Հունա-հռոմեական տաճարի ո՞ր տիպին է պատկանում Գառնիի հեթանոսական տաճարը.

- 1) ցելլա
- 2) թուլոս
- 3) դիպտերոս
- 4) պերիպտերոս

35

Գառնիի բաղնիքի խճանկարը կատարված է՝

- 1) բիտումով
- 2) գունախճիկով (սմալտա)
- 3) գետաքարերով
- 4) խեցու բեկորներով

36

Կարիատիդների պորտիկը Աթենքի Ակրոպոլիսում գտնվող ո՞ր տաճարի բաղկացուցիչ մաս է կազմում.

- 1) Նիկե Ապտերոս
- 2) Պարթենոն
- 3) Էրեքթեոն
- 4) Պրոպիլեոն

37

Վաղ քրիստոնեական եռանավ բազիլիկ կառույց է՝

- 1) Սուրբ Ստեփանոս (Լմբատավանք) եկեղեցին
- 2) Սբ. Հռիփսիմե եկեղեցին
- 3) Երեբույքի (տաճար) եկեղեցին
- 4) Աշտարակի Կարմրավոր եկեղեցին

38

Կենտրոնագմբեթ ճարտարապետության օրինակ է՝

- 1) Սուրբ Գայանե եկեղեցին
- 2) Զվարթնոցի տաճարը
- 3) Ծիծեռնավանքը
- 4) Երեբույքի տաճարը

39

Գետնախարսիսի վրա տեղադրված մույթագարդ վաղքրիստոնեական հուշարձանի օրինակ է՝

- 1) Դսեղի քառակող կոթողը
- 2) Օձունի կոթողը
- 3) Տաթևի սյունը
- 4) Հաղպատի վանական համալիրի խաչքարը

40

Աստվածամոր տարածված պատկերատիպ քրիստոնեական սրբանկարչության ասպարեզում.

- 1) <<Օղիգիտրիա>>
- 2) <<Էմանուիլ>>
- 3) <<Պանտոկրատոր>>
- 4) <<Մանդիլիոն>>

41

Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրին, Թեոդորա կայսրուհուն և նրանց շքախումբը պատկերող խճապատկերային հորինվածքները գտնվում են՝

- 1) Կիլիկիայի Ակների վանքում
- 2) Կոստանդնուպոլսի Սուրբ Իրինա եկեղեցում
- 3) Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցում
- 4) Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա եկեղեցում

42

Ո՞ր եկեղեցին է հարդարում այս պատկերաքանդակը.



- 1) Գեղարդավանքը
- 2) Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին
- 3) Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին
- 4) Էջմիածնի Մայր տաճարը

43

Ի՞նչպիսի խաչքար գոյություն չունի.

- 1) քիվավոր
- 2) ամենափրկիչ
- 3) որմնափակ
- 4) բազմաբսիդ

44

Նշվածներից ո՞րն է գորթական տաճար.

- 1) Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարը
- 2) Քյոլնի տաճարը
- 3) Ֆլորենցիայի Սանտա Մարիա Դել Ֆիորե մայր տաճարը
- 4) Լեսսայի վանական համալիրը

45

Ո՞ր հայտնի ձեռագրից է մանրանկարը.



- 1) Էջմիածնի Ավետարան
- 2) Վասակ իշխանի Ավետարան
- 3) Թարգմանչաց Ավետարան
- 4) Մուղնու Ավետարան


46

Մումիկի պատկերագրողած ձեռագրերից է՝

- 1) Հաղպատի Ավետարանը
- 2) Պատերազմի Ավետարանը
- 3) Բուրթելի իշխանի Ավետարանը
- 4) Վասակ իշխանի Ավետարանը

47

Հայոց ո՞ր արքան է ներկայացված այս կտիտորական քանդակում.



- 1) Տրդատ 3-րդ-ը
- 2) Գագիկ Ա Բագրատունին
- 3) Գագիկ Արծրունին
- 4) Աշոտ Ողորմած-ը

48

Ո՞վ է Պաղոսյան գտնվող գորահրամանատար Գատամելատի ձիարձանի հեղինակը.

- 1) Բենվենուտո Չելլինի
- 2) Անդրեա Վեռոքքիոն
- 3) Դոնաթելոն
- 4) Միքելանջելո Բուանարոտտին

49

Ո՞վ է Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարի հրապարակային պունաշարի հեղինակը.



- 1) Դոնատո Բրամանտեն
- 2) Լորենցո Բեռնինի
- 3) Ֆռանչեսկո Բոռոմինի
- 4) Կառլո Մադեռնան

50

Ու՞մ վրձնին է վերագրվում որմնանկարը.



- 1) Ստեփանոս Ներսիսյան
- 2) Հակոբ Հովնաթանյան
- 3) Գևորգ Բաշինջաղյան
- 4) Նաղաշ Հովնաթանյան

51

Հակոբ Հովնաթանյանի ո՞ր ստեղծագործությունն է հետմահու կատարված դիմանկար.

- 1) Գրիգոր Թումանյանի դիմանկարը
- 2) Նատալյա Թեումյանի դիմանկարը
- 3) Շուշանիկ Նադիրյանի դիմանկարը
- 4) Եկատերինա Գուրգենբեկովայի դիմանկարը

52

Նշվածներից ո՞վ է իմպրեսիոնիստ նկարիչ.

- 1) Ժան Ֆրանսուա Միլլեն
- 2) Կամիլ Պիսսարոն
- 3) Ժակ Լուի Դավիդը
- 4) Գյուստավ Կուրբեն

53

Նշել Հովհաննես Այվազովսկու վերջին անավարտ կտավը.

- 1) <<Դարյալի կիրճը>>
- 2) <<Ծովածոց>>
- 3) <<Թուրքական նավի պայթյունը>>
- 4) <<Քառս>>

54

Ո՞ր թվականին է Պաբլո Պիկասոն վրձնել <<Ավինյոնի աղջիկները>> կտավը՝ հիմք դնելով կուբիզմի սկզբնավորմանը.



- 1) 1904 թ.
- 2) 1905 թ.
- 3) 1907 թ.
- 4) 1906 թ.

55

20-րդ դարի հայ քանդակագործներից ո՞վ է հաճախել Օգյուստ Ռոդենի արվեստանոց.

- 1) Այծենիկ Ուրարտուն
- 2) Երվանդ Քոչարը
- 3) Հակոբ Գյուրջյանը
- 4) Արա Սարգսյանը

56

Նշվածներից ո՞վ է փոփ-արթ ուղղության ներկայացուցիչ.

- 1) Բերթա Մորիզո
- 2) Ռենե Մագրիտ
- 3) Էնդի Ուորհոլ
- 4) Անրի Մատիս

57

Նշել քանդակագործ Արտաշես Հովսեփյանի ստեղծագործությունը.

- 1) Սայաթ-Նովա հուշադրյուրը Երևանում
- 2) Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը Երևանում
- 3) Ստեփան Շահումյանի հուշարձանը Երևանում
- 4) Կոմիտասի մահարձանը Երևանում

58

Ո՞վ է նկարագարդման հեղինակը.



- 1) Հակոբ Կոջոյանը
- 2) Գրիգոր Խանջյանը
- 3) Մարտիրոս Սարյանը
- 4) Էդուարդ Բասբեկյանը

59

Ո՞ր գեղարվեստական ուղղությանն է պատկանում Անրի Մատիսի «Կարմիր սենյակ» ստեղծագործությունը.

- 1) պուանտիլիզմ
- 2) էքսպրեսիոնիզմ
- 3) իմպրեսիոնիզմ
- 4) ֆովիզմ

60

Ի՞նչպես է կոչվում Հակոբ Կոջոյանի կտավը.



- 1) «Պարսկական ճաշարան»
- 2) «Փողոց Թավրիզում»
- 3) «Փողոց Կոստանդնուպոլսում»
- 4) «Պարսկական շուկա»